



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

«06» 07 2021թ.

№ 08/ԼԱ/ - 494

**Հունիսի 28-հուլիսի 5-ին դիտված օդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հունիսի 28-ից հուլիսի 4-ին հանրապետության առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ, հուլիսի 5-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է Պուշկինի լեռնանցքում՝ 35,1մմ, Ֆանտանում՝ 31,1մմ, Արագածում՝ 30մմ, Տաշիրում՝ 26մմ, Ամասիայում՝ 22մմ, Աշոցքում՝ 20,4մմ, մնացած շրջաններում՝ 1-18մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունիսի 28-ից հուլիսի 05-ին նորմայից բարձր է եղել միջինը 3-7 աստիճանով:

Շաբաթվա ընթացքում առանձին վայրերում օդի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է տվյալ օրը երբևիցե դիտված ամենաբարձր ջերմաստիճանին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արմավիրում՝ +40°C, Արարատում՝ +38...+40°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +36...+40°C, նախալեռնային շրջաններում՝ 31°C, Վայոց Ձորի նախալեռնային շրջաններում՝ +39°C, լեռնային շրջաններում՝ +31°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +34...+39°C, լեռնային շրջաններում՝ +28...+30°C, Տավուշում՝ +34...+38°C, Շիրակում՝ +30...+34°C (Աշոցքում՝ 28°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +31...+33°C, նախալեռնային շրջաններում՝ +36°C, Լոռիում՝ +28...+32°C, Գեղարքունիքում՝ +29...+31°C (Սեմյոնովկայում՝ 25°C), Երևան քաղաքում՝ +39...+40°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Շիրակում՝ +8...+12°C, Լոռիում՝ +9...+12°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +10°C, նախալեռնային շրջաններում՝ +20°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +16°C, Գեղարքունիքում՝ +10...+13°C (Գավառում, Մասրիկում՝ +7°C), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +16...+19°C, նախալեռնային շրջաններում՝ +10...+15°C, Արմավիրում՝ +16°C, Տավուշում՝ +16...+18°C (Դիլիջանում՝ +12°C), Արարատում՝ +18...+21°C, Երևան քաղաքում՝ +17...+20°C: